ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 8,240.1 մլն դրամ՝ պլանավորված 4,900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 68.2 տոկոսով կամ 3,340.1 մլն դրամով:

Ապրիլ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3,459.9 մլն դրամ՝ պլանավորված 1,600.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.2 անգամ կամ 1,859.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 156, լուծարվել՝ 9 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 6 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 3,0 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 96 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 54-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 27-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 9-ը՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկի ճշտության և 6 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9,783 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 9,375:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 77 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում ապրիլ ամսում կատարվել է վերադարձ 9 վարձու աշխատողի՝ 2.2 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 7 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Արցախի Հանրապետության ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող պետական աջակցության միջոցառման շրջանակում հաշվետու ամսում եկամտային հարկի չափով աջակցություն է տրամադրվել 747 հարկ վճարողի՝ 222.4 մլն դրամ գումարի չափով:

Մշակվել և ԱՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և դրանց սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» և «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հսկիչ կետում շուրջօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող՝ հարկային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց 2021 թվականին տրվող սննդի փոխհատուցման գումարի չափը սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով սահմանվել են «Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Ը» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները» ու «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2021» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը», որոնք ԱՀ կառավարության որոշմամբ 2021 թվականի մայիսի 10-ից դրվել են կիրառության մեջ:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք

հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 525 տեղեկանք:

Ապրիլ ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 498, ելքագրվել՝ 260 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն: